

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համայնքի ավագանու հարգելի անդամներ.

Ձեզ է ներկայացվում Սեմյոնովկայի համայնքի ղեկավարի 2011 թվականին կատարված աշխատանքների հաշվետվությունը:

Այս ժամանակահատվածում հրավիրվել է համայնքի ավագանու 9 նիստ, կայացել են 12 որոշումներ: Իսկ համայնքի ղեկավարի ընդունելություն՝ թվով 12 և ժողովներ, որտեղ քննարկվել են համայնքին հուզող հարցերը:

1. Մարդասիրական օգնություններ և ծրագրեր

Սեմյոնովկայի համայնքում 2011 թվականին իրականացվել են բազմաթիվ ծրագրեր: Քանի որ Սեմյոնովկայի բնակչության մեծ մասը գործազուրկ է և կարիքավոր, ուստի անհրաժեշտ էր մշակել ծրագրեր և ինչպես հարկն է ներկայացնել համապատասխան կազմակերպություններին: Կարծես թե դիմելուց հետո ջանքերս իզուր չեղան: «Անկոր» կազմակերպությունը մտավ գյուղ, ծանոթացավ գյուղի հոգսերին և կարճ ժամանակահատվածում գյուղի բնակչության ամենաանապահով խավին տրամադրեց մեղուներ, ոչխարներ, հավեր: Միաժամանակ ամբողջ տարին ջանասիրաբար հետևեցին մեղուների խնամքին, ինչպես նաև ազգաբնակչությանը տրամադրեցին ընտանի կենդանիների խնամքին անհրաժեշտ պարագաներ:

«Անկոր» կազմակերպությունը գյուղում իրականացրեց նաև ուրիշ ծրագրեր. ամբողջ համայնքին բաժանեցին հիգիենայի պարագաներ, կտորներ, գրենական պիտույքներ: Սակայն, միայն այս մարդասիրական օգնության ծրագրով չսահմանափակվեցի: Աջակցության ակնկալիքով դիմեցի նաև «Լանթաուս» և «քանթերփայթ» կազմակերպություններին: Նրանք նույնպես չմերժեցին, իմանալով գյուղի անմխիթար վիճակը: Շուտով բնակչության ամեն մի տնտեսության անունով պոլիէթիլենային մեծ տոպրակներով տրամադրվեցին հագուստ, կոշիկ, պայուսակ, խաղալիքներ երեխաներին, ձեթ, շաքարավազ: Աշխատում են որքան հնարավոր է արդարացնել իմ ազգաբնակչության հույսերը:

2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

Այս տնտեսության բնագավառում ՄԱԿ-ի պարենային ծրագրով իրականացվեց ջրագծի կառուցումը: Համայնքի բնակչության ավելի քան 15 մարդուց ավել ընդգրկվեցին այդ աշխատանքները կատարելու և վարձատրվեցին սնունդով՝ աշխատանքի դիմաց:

Կառավարության կողմից իրականացվեց գազաֆիկացումը:

3. Տրանսպորտ, առևտուր և սպասարկում

2011 թվականին համայնքի արարողությունների սրահի համար կատարվեց 480.0 հազար դրամի ներդրում: Գնվեց սպասքի առարկաներ:

4. Կրթություն, մշակույթ և երիտասարդության հետ կատարվող աշխատանքներ

Համայնքի հիմնական դպրոցը գործում է իր բնականոն հունով: Դպրոցը համալրված է մանկավարժական կադրերով: Չնայած դրան դպրոցի շենքը գտնվում էր անմխիթար վիճակում: Անհրաժեշտ էր, որքան հնարավոր է, արագ տեմպով լուծել դպրոցի վերանորոգման հարցը: Գյուղապետարանը այդքան հարուստ չէ, որ կարողանա

այդպիսի մեծ աշխատանքներ իրականացնի, ուստի դիմեցի «Եկեղեցական կլոր սեղան» կազմակերպությանը՝ դպրոցի տանիքի հարցը լուծելու համար և կարծես շատ շուտով այդ հարցը լուծվեց: Անհրաժեշտ էր նաև շենքի վերանորոգման համար մտածել: ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ն. Պողոսյանի աջակցությամբ, իմ ներդրումով և համայնքի բնակիչների աշխատանքով վերանորոգվում է դպրոցի շենքը: Այժմ վերանորոգումը գտնվում է ընթացքի մեջ:

2011 թվականին չլուծված հարց է մնացել մշակույթի տան, գրադարանի և գյուղապետարանի շենքի վերանորոգումը: Չնայած դրան, այստեղ բոլոր տոները և հիշարժան օրերը նշվում են, կազմակերպվում են միջոցառումներ:

Չեն մոռանում նաև ուշադրություն դարձնել երեխաներին: Լուծում են էքսկուրսիաների հարցը, 1 դասարանցիներին տալիս են պայուսակներ և գրեմական պիտույքներ:

Բարգավաճ Հայաստան կուսակցության կողմից նոր տարվա կապակցությամբ երեխաներին տվեցին կուլոկներ:

5. Առողջապահություն և սոցիալական ծառայություն

Սեմյոնովկա համայնքը ունի մեկ բուժկետ, որտեղ աշխատում է 1 ընտանեկան բուժքույր, բժիշկը շաբաթը մեկ անգամ այցելում է համայնք, չնայած դրան բուժքույրը ջանասիրաբար է սպասարկում ամբողջ ազգաբնակչությանը:

Սոցիալական ծառայության «Փարոս» համակարգից օգտվում են 20 ընտանիքներ:

Անապահովության գնահատման մեխանիզմից կախված դեռևս համայնքում կան սոցիալապես անապահով ընտանիքներ, սակայն չեն օգտվում այդ համակարգից:

Հաշվետու ժամանակաշրջանում գյուղապետարանը տեղական բյուջեի հաշվին որոշակի ֆինանսական աջակցություն է ցուցաբերել նման ընտանիքներին:

6. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության բնագավառում 2011 թվականին, ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ մեզ մոտ գոհացուցիչ ցուցանիշներ չկան:

Անասնաբուժության ծառայության ոլորտում պետպատվերի շրջանակում իրականացվում է բոլոր հակահամաճարակային միջոցառումները:

7. Ֆինանսներ

Սեմյոնովկայի համայնքի 2011 թվականի տարեկան բյուջեով սեփական եկամուտները նախատեսված է եղել 4170.4 հազար դրամ: Դրանից կատարվել է 2707.2 հազար դրամ, այսինքն 64.9%: Բնակչության անվճարունակության պատճառով հնարավոր չէրավ եկամուտները 100% -ով ապահովել: Կարծես նախկին գյուղապետը պարտքերով մեծ ժառանգություն էր թողել, որը երկար տարիներ հնարավոր չէ մարել:

2011 թվականին ծախսային մասով բավականաչափ աշխատավարձի և սոցվճարի պարտքեր փակվել են:

Ամփոփելով հաշվետվությունը, ցանկանում են ավելացնել, որ 2011 թվականին առաջխաղացում կա: Սակայն դեռևս կան բազմաթիվ խնդիրներ, որոնք, անկասկած, կլուծվեն: Թեկուզ նաև կան բազմաթիվ ծրագրեր, որոնք մշակվել և ներկայացվել են համապատասխան կազմակերպություններին և ընթացքի մեջ են: